ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/33

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Դեագա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Մուրադյանի, Ա. Համբարձումյանի,
«Դեագա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Գուլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Դեագա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.03.2022թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 16.03.2022թ. ժամը 11:00-ի թիվ 7 արձանագրության (որոշման) 2-րդ կետերով կայացված ընտրված մասնակիցներ ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշումը:

2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերանայել իր դիրքորոշումը գնման օրենսդրության խախտմամբ հայտի ապահովումներ ներկայացրած ընկերությունների հայտերի գնահատման վերաբերյալ և մերժել դրանք օրինապաշտ մասնակիցների իրավունքների և արդարության վերականգնման համար:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.03.2022թ.-ին:

28.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/33 համարի ծածկագիրը:

31.03.2022թ.-ին, 08.04.2022թ.-ին և 14.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.04.2022թ.-ին:

2. «Դեագա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դեագա» ՍՊԸ-ն 25.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան՝ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն մասնակցել է ս/թ փետրվարի 3-ին Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթին: Ժամանակին և սահմանված ժամկետում ներկայացրել է որոշ չափաբաժինների համար հրավերով պահանջվող հայտի ապահովման փաստաթուղթը՝ բանկային երաշխիքի տեսքով: Պատշաճ կարգով՝ ըստ գնումների օրենսդրության, 21.02.2022թ մինչև ժամը 17:00-ը գրությամբ ներկայացրել է

Պատվիրատուին բանկային երաշխիքի բնօրինակը: 21.02.2022 թվականի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ նշված շտկումների ցանկի համաձայն՝ մասնակիցների մեծամասնությունը չի ներկայացրել էլեկտրոնային համակարգով հայտի ապահովումներ: Ս/թ փետրվարի 21-ին «Դեագա» ՍՊԸ-ն գրությամբ պահանջել է տեղեկատվություն մյուս մասնակիցների հայտի ապահովումները ժամանակին ներկայացվելու վերաբերյալ: 21.02.2022թ-ին Պատվիրատուն պատասխան նամակ է ուղարկել մասնակցի էլեկտրոնային փոստին և կցել մյուս մասնակիցների փաստաթղթերը (հայտի ապահովումները) ,,Ի պատասխան Ձեր գրության՝ ներկայացվում է գրությամբ ներկայացված տեղեկատվությունը,,:

Բոլոր մասնակիցները ներկայացրել են երաշխիքներ 22.02.2022թ ամսաթվով: Ստացվում է, որ խախտվել է գնումների օրենսդրությունը: Չի պահպանվել ժամային առումով հաջորդ օրը ժամը՝ Երևանի ժամանակով 17:00-ն մասը: Որպես երկար տարիների փորձառություն ունեցող և հաճախակի բանկային երաշխիքներ ներկայացնող Ընկերություն հայտնում ենք, որ բանկը մեկ օրում չի կարող տրամադրել երաշխիք: Ստացվում է, որ մնացած բոլոր մասնակիցները ավելի վաղ ունեցել են ապահովումները, բայց չեն ներկայացրել ոչ armeps գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով և ոչ էլ հաջորդ օրը մինչև 17:00-ը: Շտկման մեկ աշխատանքային օր տրամադրելուց հետո ներկայացնում են փաստաթուղթը այնպիսի ամսաթվով, որ հակասում է վերը նշված երկու կետերին: Եթե թյուրիմացաբար չի կցվել ապահովումը, ապա այն պետք է լինի մինչև հայտերի բացման վերջնաժամկետի ամսաթվով և մինչև 17:00-ն ներկայացվի Պատվիրատուին: Խախտվում և ոտնահարվում է օրինապաշտ մասնակիցների իրավունքները: Ստացվում է կարելի է անտեսել հրավերի որոշ կետեր և ժամանակ շահել:

Համաձայն 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի ե) ենթակետ՝ ե. հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ,

Հրավերի I մասի 4-րդ բաժնի 4-րդ կետ և II մասի 2.5 կետ.

հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 16.03.2022թ. ժամը 11:00-ի թիվ 7 արձանագրության (որոշման) 2-րդ կետերով կայացված ընտրված մասնակիցներ ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշումը:

2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերանայել իր դիրքորոշումը գնման օրենսդրության խախտմամբ հայտի ապահովումներ ներկայացրած ընկերությունների հայտերի գնահատման վերաբերյալ և մերժել դրանք օրինապաշտ մասնակիցների իրավունքների և արդարության վերականգնման համար:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.03.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5196-2022 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 25.03.2022թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 29.03.2022թ.-ի թիվ 02/61-6978 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 28.03.2022 թվականի գրության՝ «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ բողոքաբեր) 25.03.2022 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Գտնում ենք, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը կայացել է 18.02.2022 թվականին ժամը 12:00-ին: Հաշվի առնելով հայտարարված չափաբաժինների և հայտ ներկայացրած մասնակիցների քանակը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է՝ մասնակցիների կողմից ներկայացված փաստաթղթերի առկայության և դրանց՝ հրավերի պահանջներին համապատասխանության ուսումնասիրման նպատակով:

Գնահատող հանձնաժողովի 21.02.2022 թվականին կայացած նիստի ընթացքում արձանագրվել է մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այդ թվում՝ ընթացակարգի որոշ չափաբաժինների մասով հրավերով պահանջվող հայտի ապահովման բացակայություն, ինչի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցվել է մասնակիցներին շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակիցների կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում /ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ 22.02.2022 թվականին/ ներկայացվել են հայտերի ապահովման միջոցները (փաստաթղթերը)՝ բանկային երաշխիքի և կանխիկ փողի ձևերով:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված հայտի ապահովումները համապատասխանում են օրենսդրական պահանջներին:

Ուսումնասիրելով բողոքաբերի կողմից բերված բողոքը, որի հիմքում ըստ էության դրված է այն հանգամանքը, որ մասնակիցները մեկ օրում չէին կարող բանկերից վերցնել բանկային երաշխիքներ և դրանք ունեցել են ավելի վաղ՝ ապա տեղեկացնում եմ, որ ներկայացված բոլոր բանկային երաշխիքները բանկերի կողմից ելքագրված են 22.02.2022 թվականին, հայտերը բացվելուց հետո, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովումներում նշված է վճարման ամսաթիվ 22.02.2022 թվական /բացառությամբ Սավա ՍՊԸ-ի՝ վճարվել է 17.02.2022 թվականին/:

Անդրադառնալով նաև բողոքաբերի այն պնդմանը, որ օրենսդրությամբ սահմանված հայտի ապահովման շտկումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ մասնակիցը

հայտը տեղադրելու օրվա դրությամբ ունեցել է հայտի ապահովման փաստաթուղթ, սակայն ինչ-ինչ պատճառներով այն չի ներբեռնել համակարգում, ապա նշեմ, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության, եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, տվյալ իրավանորմով սահմանվում է համակարգում առկա, կցված փաստաթղթի ներկայացումը մինչև հաջորդ աշխատանքային օրը, իսկ բացակա, չկցված փաստաթղթի դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է շտկման հնարավորության պարտադիր իրավանորմ:

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ հրավերով պարտադիր կերպով սահմանված է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետն ուղղակիորեն

սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն՝ հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի՝ գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն իրավանորմի իմաստից բխում է, որ մասնակցի՝ հրավերով սահմանված փաստաթղթերը (բացի գնային առաջարկից), անկախ այն հանգամանքից, թե լրացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջների, թե ընդհանրապես կցված չեն, օրենսդիրը սահմանել է շտկման հնարավորություն և փաստաթղթերի շտկումը չի ենթադրում, որ դրանք պետք է վավերացված լինեն հայտը ներկայացնելու ամսաթվով, քանի որ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման հնարավորությամբ չի մանրամասնվում, այն է՝ չի նշվում, թե արդյոք մասնակիցը պետք է միայն շտկի արդեն իսկ ներկայացրած հայտի ապահովումը, թե նա իրավունք ունի ներկայացնելու նաև հայտի նոր ապահովում, որը նույնպես դիտարկվում է որպես անհամապատասխանության շտկում: Հետևաբար հայտի նոր ապահովում ներկայացնելու պայմաններում հնարավոր չէ ապահովել հրավերի I մասի 4-րդ բաժնի 4-րդ կետի և II 2.5 կետի պահանջը, այլպես օրենսդրությամբ սահմանված շտկման հնարավորությունը իմաստազրկվում է:

Ավելին գնումների մասին ՀՀ օրեսդրությունը սահմանելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքներ, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 03.02.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔ-

ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 18.02.2022թ.-ի ժամը 12:00-ն:

ii. Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Դեագա» ՍՊԸ-ն, «Հայկազունք» ՍՊԸ-ն, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ն, «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 21.02.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.3 կետի համաձայն՝

- «Հայկազունք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է հրավերի 7-րդ կետում նշված չափաբաժինների մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը, թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում 1-8,11,12,20,31,40-46 տեխնիկական բնութագրում նշված «ֆիրմային անվանում» և «ապրանքային նշան» սյունակներում նշված տեղեկատվության ապրանքային նշանը, բնութագրերում նշված «կամ համարժեք» հղման փոխարեն հստակ նշել առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-ը, առանց «կամ համարժեք» հղման /համապատասխան ապրանքների մասով/:

- «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում 1, 2, 3, 4-8, 11, 12, 20, 31, 35, 36, 39-46 տեխնիկական բնութագրում նշված «ֆիրմային անվանում» և «ապրանքային նշան» սյունակներում նշված տեղեկատվության փոխարեն անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը և արանքային նշանը, բնութագրերում նշված «կամ համարժեք» հղման փոխարեն հստակ նշել առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-ը, առանց «կամ համարժեք» հղման /համապատասխան ապրանքների մասով/:

- «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է հրավերի 7-րդ կետում նշված չափաբաժինների մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը, ինչպես նաև թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագիրը ամբողջական չէ, չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Միաժամանակ տեխնիկական բնութագրում նշված «կամ համարժեք» հղման փոխարեն անհրաժեշտ հստակ նշել առաջարկվող ապրանքների ստանդարտը, առանց «կամ համարժեք» հղման:

- «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է հրավերի 7-րդ կետում նշված չափաբաժինների մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը,

ինչպես նաև թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում 1, 2, 4-8, 35, 36, 39 չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների «ֆիրմային անվանում» և «ապրանքային նշան» սյունակներում նշված տեղեկատվության փոխարեն անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը, բնութագրերում նշված «կամ համարժեք» հղման փոխարեն հստակ նշել առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-ը, առանց «կամ համարժեք» հղման /համապատասխան ապրանքների մասով/:

- «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է հրավերի 7-րդ կետում նշված չափաբաժինների մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը 1.1 հավելվածով 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագրում նշված «կամ համարժեք» հղման փոխարեն անհրաժեշտ հստակ նշել առաջարկվող ապրանքների ԳՈՍՏ-ը, առանց «կամ համարժեք» հղման, ինչպես նաև տեխնիկական ներկայացված բնութագրերը ամբողջական չեն, չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

iv. Նույն արձանագրության 1.4 համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված 526-Ն որոշման գնումների կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է ծանուցել 1.3 կետում նշված մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր՝ մինչև 23.02.2022թ./ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 24.02.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ ընթացակարգի շրջանակներում «Արփինե Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից 23.02.2022թ.-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 51-րդ հոդվածը 1-ին մասի պահանջները, որոշել է հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման հաջորդ աշխատանքային օրը:

vi. Հանձնաժողովի 14.03.2022թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը միջնորդություն էր ներկայացրել ՀՀ բողոք քննող անձին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/23 բողոքի շրջանակներում կիրառել «Գնումների մասին» օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման գործընթացը հանել կասեցումից: ՀՀ բողոք քննող անձի

11.03.2022թ.-ի միջանկյալ որոշմամբ ընթացակարգը կասեցումից հանվել է, բացառությամբ 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է շարունակել գնման գործընթացը:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի շրջանակներում «Դեագա» ՍՊԸ-ի, «Հայկազունք» ՍՊԸ-ի, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

viii. Հանձնաժողովի 16.03.2022թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ են ճանաչվել.

- 1, 2, 3, 11, 20, 40-րդ չափաբաժինների մասով «Հայկազունք» ՍՊԸ-ն,
- 5-8, 12, 18, 28, 41, 42, 46-րդ չափաբաժինների մասով «Դեագա» ՍՊԸ-ն,
- 13, 16, 17, 19, 21, 22, 33, 35, 36, 39-րդ չափաբաժինների մասով «Ֆոտոն» ՍՊԸ-ն,
- 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն,
- 23, 32, 37-րդ չափաբաժինների մասով «Գագ Մարկ» ՍՊԸ-ն,
- 24, 25, 26, 30-րդ չափաբաժինների մասով Արփինե Կարապետյան Ա/Ձ-ն,
- 27-րդ չափաբաժնի մասով Արմեն Ասատրյան Ա/Ձ-ն,
- 29, 31, 34-րդ չափաբաժինների մասով «Ֆուդսիթի» ՍՊԸ-ն,
- 38-րդ չափաբաժնի մասով «Բիգ Լայֆ» ՍՊԸ-ն,
- 43-րդ և 44-րդ չափաբաժինների մասով «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ՍՊԸ-ն:

ix. «Հայկազունք» ՍՊԸ-ն «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 22.02.2022թ.-ին տրամադրված թիվ 652-1726 բանկային երաշխիքը:

x. «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ն «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից 22.02.2022թ.-ին տրամադրված թիվ 16302-10/42 բանկային երաշխիքը:

xi. «Ֆոտոն» ՍՊԸ-ն «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող

հանձնաժողովին է ներկայացրել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից 22.02.2022թ.-ին տրամադրված թիվ 659 բանկային երաշխիքը:

xii. «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ն «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել որպես հայտի ապահովման միջոց՝ 22.02.2022թ.-ին թիվ 22002222065197062 համարի վճարման հանձնարարագիրը՝ կանխիկ փողի ձևով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 25.03.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ

օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև

հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի

ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում 1-16, 22, 38, 41, 42, 43, 44 և 46-րդ չափաբաժինների մասով:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ

մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝

հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 03.02.2022թ.-ին հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 18.02.2022թ.-ի ժամը 12:00-ն ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Դեագա» ՍՊԸ-ն, «Հայկազունք» ՍՊԸ-ն, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ն, «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ն: Հանձնաժողովի 21.02.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հայկազունք» ՍՊԸ-ի, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև բոլորը միասին՝ Մասնակիցներ) կողմից ներկայացված հայտերում, բացի այլ անհամապատասխանություններից, բացակայում է հրավերի 7-րդ կետում նշված չափաբաժինների մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը, ինչի արդյունքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է ծանուցել 1.3 կետում նշված մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր՝ մինչև 23.02.2022թ./ շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 14.03.2022թ.-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հայկազունք» ՍՊԸ-ի, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովի 16.03.2022թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ են ճանաչվել.

- 1, 2, 3, 11, 20, 40-րդ չափաբաժինների մասով «Հայկազունք» ՍՊԸ-ն,
- 5-8, 12, 18, 28, 41, 42, 46-րդ չափաբաժինների մասով «Դեագա» ՍՊԸ-ն,
- 13, 16, 17, 19, 21, 22, 33, 35, 36, 39-րդ չափաբաժինների մասով «Ֆոտոն» ՍՊԸ-ն,
- 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ-ն,
- 23, 32, 37-րդ չափաբաժինների մասով «Գագ Մարկ» ՍՊԸ-ն,
- 24, 25, 26, 30-րդ չափաբաժինների մասով Արփինե Կարապետյան Ա/Ձ-ն,

- 27-րդ չափաբաժնի մասով Արմեն Ասատրյան Ա/Ձ-ն,
- 29, 31, 34-րդ չափաբաժինների մասով «Ֆուդսիթի» ՍՊԸ-ն,
- 38-րդ չափաբաժնի մասով «Բիգ Լայֆ» ՍՊԸ-ն,
- 43-րդ և 44-րդ չափաբաժինների մասով «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ՍՊԸ-ն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ հրավերը, «Հայկազունք» ՍՊԸ-ի, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումները, Հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից, Մասնակիցների հայտերը բավարար գնահատելու և որոշ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին կայացված որոշումը բխում է Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 42-րդ կետով և Հրավերի 8.10-րդ կետով սահմանված դրույթների պահանջներից:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 03.02.2022թ.-ին հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, «Հայկազունք» ՍՊԸ-ի, «Պրոյեկտ-Ինտեր Ինվեստ» ՍՊԸ-ի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ Մասնակիցների կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ և Հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույթների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 16.03.2022թ.-ի ժամը 11:00-ի թիվ 7 արձանագրության (որոշման) 2-րդ կետերով կայացված ընտրված մասնակիցներ ճանաչելու և պայմանագիր կնքելու, ինչպես նաև հանձնաժողովին իր դիրքորոշումը գնման օրենսդրության խախտմամբ հայտի ապահովումներ ներկայացրած ընկերությունների հայտերի գնահատման վերաբերյալ վերանայելուն պարտավորեցնելու պահանջների մասին բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դեագա» ՍՊԸ-ի կողմից 25.03.2022թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/33 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**